Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. հունվարի 27-ի թիվ 11-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 10
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 11
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 13
7. Հետհսկողական գործընթաց - էջ 17
8. Առաջարկություններ - էջ 19

1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Մ Ա Ս

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 253-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:
Հաշվեքննության առարկան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի թիվ 1121 որոշում, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշում, ՀՀ կրթության և գիտության նախարարի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտեի նախագահի հրամաններ:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև 2022 թվականի հունվարի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132–Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն: Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:
Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Եղիշե Սողոմոնյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության:

2. **Կոմիտե** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:

3. **Ծրագիր 1** – (1162-11002) «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագիր:

4. **Ծրագիր 2** – (1162-11004) «Ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանություն» ծրագիր:

5. **Ծրագիր 3** – (1162-12001) «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» ծրագիր:

6. **ԾՐԱԳՐԵՐ** - Ծրագիր 1-ից Ծրագիր 3-ը ներառյալ:

7. **ԳԱԱ** – Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա:

8. **ԵՊՀ** – Երևանի պետական համալսարան:

9. **Հոդված 1** – (462100) «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին»:

10. **Հոդված 2** – (463500) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին»:

11. **Հոդված 3** – (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին»:

12. **Հոդված 4** – (463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին»:

13. **Հոդված 5** – (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»:

14. **Հոդված 6** – (465100) «Կապիտալ դրամաշնորհներ պետական կառավարման հատվածին»:

3. Ա Մ Փ Ո Փ Ա Գ Ի Ր

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. ինն ամիսների պլանի և ճշտված պլանի ընդհանուր տարբերությունը կազմել է 488,515.2 հազ. դրամ, որը վերաբերվում է Ծրագիր 1-ին (498,201.9 հազ. դրամ) և Ծրագիր 2-ին (-9,686.7 հազ. դրամ): Ըստ Ծրագիր 1-ի և Ծրագիր 2-ի նշված տարբերությունները պայմանավորված են ՀՀ կառավարության 2021թ. մարտի 18-ի թիվ 371-Ն, 2021թ. մարտի 25-ի թիվ 397-Ն և ապրիլի 8-ի թիվ 524-Ն որոշումներով և վերադասի կողմից վերաբաշխմամբ կատարված համապատասխան փոփոխություններով (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ -ի 2021թ. ինն ամիսների պլանի և ճշտված պլանի փոփոխությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

ԾՐԱԳՐԵՐ	Հոդվածներ	2021թ. ինն ամիսներ				
		Պլան	Ճշտված պլան	Տարբերություններ *(+. -)*		
				ՀՀ կառավարության որոշումներով	Վերադասի կողմից	**Ընդամենը**
Ծրագիր 1	Հոդված 1	422,221.7	422,221.7	**508,167.2**	**-9,965.3**	**0.0**
	Հոդված 2	20,599.0	19,683.4			**-915.6**
	Հոդված 3	3,138,047.9	3,090,575.2			**-47,472.7**
	Հոդված 4	128,572.2	115,627.9			**-12,944.3**
	Հոդված 5	1,457,077.0	2,016,611.5			**559,534.5**
Ընդամենը՝ Ծրագիր 1		**5,166,517.8**	**5,664,719.7**	**508,167.2**	**-9,965.3**	**498,201.9**
Ծրագիր 2	Հոդված 3	160,789.7	157,612.8	**-14,452.0**	**4,765.3**	**-3,176.9**
	Հոդված 5	589,772.9	583,263.1			**-6,509.8**
Ընդամենը՝ Ծրագիր 2		**750,562.6**	**740,875.9**	**-14,452.0**	**4,765.3**	**-9,686.7**
	Հոդված 2	210.0	210.0	**0,0**	**0,0**	**0.0**
	Հոդված 3	367,209.5	367,209.5			**0.0**
	Հոդված 4	24,500.0	24,500.0			**0.0**
	Հոդված 5	197,480.5	197,480.5			**0.0**
	Հոդված 6	0.0	0.0			**0.0**
Ընդամենը՝ Ծրագիր 3		**589,400.0**	**589,400.0**	**0,0**	**0,0**	**0,0**
ԱՄԲՈՂՋԸ՝ ԾՐԱԳՐԵՐ		**6,506,480.4**	**6,994,995.6**	**493,715.2**	**-5,200.0**	**488,515.2**

Կոմիտեի 2021թ. ինն ամիսների ԾՐԱԳՐԵՐ-ում ընդհանուր ֆինանսավորումը կազմել է 5,628,299.5 հազ. դրամ, որը ճշտված պլանի (6,994,995.6 հազ. դրամ) նկատմամբ կազմել է 80,5% կամ թերֆինանսավորումը՝ 1,366,696.1 հազ. դրամ: Կոմիտեի 2021թ. ինն ամիսների ԾՐԱԳՐԵՐ-ի ճշտված պլանի հանդեպ թերֆինանսավորումները պայմանավորված են մի քանի հանգամանքներով (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ -ի 2021թ. ինն ամիսների ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	ԾՐԱԳՐԵՐ	2021թ. ինն ամիսներ			Թերֆինանսավորման պատճառները
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	Թերֆինան-սավորում	
1	Ծրագիր 1	5,664,719.7	4,445,220.2	1,219,499.5	Կոմիտեի գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունները, ելնելով գործունեության առանձնահատկություններից, 2021թ. տարեկան նախապես պլանավորված ծախսերից առաջին կիսամյակի համար նախատեսված որոշակի ծախսեր տեղափոխել են հաջորդ՝ չորրորդ եռամսյակ:
2	Ծրագիր 2	740,875.9	724,179.3	16,696.6	
3	Ծրագիր 4	589,400.0	458,900.0	130,500.0	Ֆինանսավորումը տրվում է գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացվող փաստացի հայտերի հիման վրա, որոնք ճշտվում են յուրաքանչյուր եռամսյակի կտրվածքով՝ կապված տվյալ կազմակերպություններում թեկնածուների և դոկտորների փաստացի թվի փոփոխությունների հետ:
Ընդամենը՝		6,994,995.6	5,628,299.5	1,366,696.1	

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. ինն ամիսների ճշտված պլանի և դրամարկղային ծախսի (5,618,603.5 հազ. դրամ) միջև առաջացել է 9,696.0 հազ. դրամի տարբերություն (Ծրագիր 1-ում՝ 9,686.4 հազ. դրամ և Ծրագիր 3-ում 150,0 հազ. դրամ), ինչը վերը հիշատակված ընդհանուր թերֆինանսավորման և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների ճշտված պլանի հանդեպ դրամարկղային ծախսի տարբերության՝ 1,229,195.5 հազ. դրամի, հանրագումարն է: Ծրագիր 1-ում 9,686.4 հազ. դրամի մնացորդը պայմանավորված է ԳԱԱ կողմից կազմակերպված սարքավորումների գնման

գործընթացի ձգձգմամբ, որի արդյունքում հնարավոր չի եղել վճարումն իրականացնել 2021թ. ինն ամիսների ընթացքում, այն տեղափոխվել և իրականացվելու է չորրորդ եռամսյակում:

Ըստ ԾՐԱԳՐԵՐ-ի Կոմիտեի հաշվետու ժամանակաշրջանի փաստացի և դրամարկղային ծախսերի միջև առկա է 85,889.5 հազ. դրամի տարբերություն, որը ըստ Ծրագիր 1-ի կազմել է +31,277.4 հազ. դրամ, ըստ Ծրագիր 2-ի՝ +39,107.5 հազ. դրամ, իսկ ըստ Ծրագիր 3-ի՝ +15,504.6 հազ. դրամ (տես՝ Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում 2021թ. ինն ամիսների դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների տարբերությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2021թ. ինն ամիսներ						
		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբերություն (+, -)	Դեբիտորա-կան պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտո-րական պարտքերի աճ, նվազում (+, -)	Տարբերություն (+, -) Սյունակ 6 – Սյունակ 7	Սյունակ 8 – Սյունակ 5 (+, -)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Ծրագիր 1	4,435,524.2	4,466,801.6	**+ 31,277.4**	*+ 2,686.7*	*+ 33,964.1*	**- 31,277.4**	*0,0*
2	Ծրագիր 2	**724,179.3**	**763,286.8**	- 39,107.5	*- 39,107.5*	*0,0*	***- 37,107.5***	*0,0*
3	Ծրագիր 3	**458,900.0**	**474,404.6**	**+ 15,504.6**	*+ 135.1*	*+ 15,639.7*	**-15,504.6**	*0,0*
Ընդամենը՝		**5,618,603.5**	**5,704,493.0**	**+ 85,889.5**	***-36,285.7***	+ 49,603.8	**- 85,889.5**	*0,0*

Կոմիտեի Ծրագիր 1-ում 2021թ. ինն ամիսների փաստացի ծախսի՝ 85,889.5 հազ. դրամով դրամարկղային ծախսին գերազանցումներն ըստ հոդվածների արձանագրվել են.

- Կոմիտեի Ծրագիր 1-ի Հոդված 5-ում դեբիտորական պարտքերը նվազել են 68,690.7 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերն աճել են 33,694.3 հազ. դրամով, որի արդյունքում փաստացի ծախսը 102,385.0 հազ. դրամով գերազանցել է դրամարկղային ծախսին:
- Կոմիտեի Ծրագիր 1-ի Հոդված 2-ում դեբիտորական պարտքերն աճել են 2,102.0 հազ. դրամով, որի արդյունքում դրամարկղային ծախսը նույն գումարով գերազանցել է փաստացի ծախսին:
- Կոմիտեի Ծրագիր 1-ի Հոդված 3-ում դեբիտորական պարտքերի 69,275.4 հազ. դրամով և կրեդիտորական պարտքերի 269.8 հազ. դրամով աճման արդյունքում դրամարկղային ծախսը 69,005.6 հազ. դրամով գերազանցել է փաստացի ծախսին:

Կոմիտեի Ծրագիր 1-ի հոդվածներում (Հոդված 1-ում և Հոդված 4-ում տարբերություններ չեն արձանագրվել) գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակահատվածում պարտավորությունների կատարման ընթացքում տեղի են ունեցել դեբիտորական պարտքի ընդհանուր (2,686.7 հազ. դրամ) և կրեդիտորական պարտքի ընդհանուր (33,964.1 հազ. դրամ) համապատասխան աճերով պայմանավորված ձևավորվել են Ծրագիր 1-ի փաստացի ծախսի 31,277.4 հազ. դրամով դրամարկղային ծախսին գերազանցելու հանգամանքը:

Կոմիտեի Ծրագիր 1-ի 2021թ. տարեկան կտրվածքով ծախսերի շարունակական առանձնահատկությամբ (հիմնականում հաշվետու ժամանակաշրջանի վերջին ամսվա համար հաշվարկված, սակայն չվճարումը հաջորդ ամիս տեղափոխված աշխատավարձեր) պայմանավորված 2021թ. ինն ամիսների ընթացքում ձևավորվել են կրեդիտորական պարտքերի աճեր (44,274.6 հազ. դրամ):

Կոմիտեի Ծրագիր 2-ի Հոդված 5-ում 2021թ. ինն ամիսների փաստացի ծախսը 39,107.5 հազ. դրամով գերազանցել են դրամարկղային ծախսին: Այն պայմանավորված է տարեկան կտրվածքով չիրականացված ծախսերի շարունակականության հետ կապված դեբիտորական պարտքերի աճով (կրեդիտորական պարտքեր չեն հաշվառվել):

Կոմիտեի Ծրագիր 3-ում 2021թ. ինն ամիսների փաստացի ծախսի՝ 15,504.6 հազ. դրամով դրամարկղային ծախսի գերազանցումներն ըստ հոդվածների արձանագրվել են.

- Կոմիտեի Ծրագիր 3-ի Հոդված 3-ում դեբիտորական պարտքերն աճել են 185.1 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերը՝ 4,700.0 հազ. դրամով, որի արդյունքում փաստացի ծախսը 4,514.9 հազ. դրամով գերազանցել է դրամարկղային ծախսին:
- Կոմիտեի Ծրագիր 3-ի Հոդված 4-ում կրեդիտորական պարտքերն աճել են 150.0 հազ. դրամով, որի արդյունքում նույն գումարով փաստացի ծախսը գերազանցել է դրամարկղային ծախսին:
- Կոմիտեի Ծրագիր 3-ի Հոդված 5-ում դեբիտորական պարտքերի 69,275.4 հազ. դրամով նվազման և կրեդիտորական պարտքերի 10,689.7 հազ. դրամով աճման արդյունքում փաստացի ծախսը 10,689.7 հազ. դրամով գերազանցել է դրամարկղային ծախսին:
- Կոմիտեի Ծրագիր 3-ի Հոդված 6-ում կրեդիտորական պարտքերն աճել են 150.0 հազ. դրամով, որի արդյունքում նույն գումարով փաստացի ծախսը գերազանցել է դրամարկղային ծախսին:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կոմիտեից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից, հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. ինն ամիսների ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների հաշվեքննության իրականացման համար դիտարկվել են նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականները: Հաշվեքննության ժամանակ կարևորվել է ՀՀ կառավարություն ներկայացրած բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալների ընդգրկելու խնդիրները:

Կոմիտեի 2021թ. ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված անհամապատասխանությունները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. ընդհանուր տարեկան պլանը կազմել է 9,294,971.9 հազ. դրամ, ճշտված տարեկան պլանը 9,993,879.4 հազ. դրամ, տարբերությունը՝ 698,907.5 հազ. դրամը, հիմնավորված է ՀՀ կառավարության որոշումներով կատարված 705,307.5հազ. դրամ փոփոխություններով (Ծրագիր 1-ում՝ 739,623.7 հազ. դրամով աճի իսկ Ծրագիր 2-ում՝ 34,316.2 հազ. դրամով նվազեցմամբ), ինչպես նաև՝ վերադասի կողմից սահմանված կարգով վերաբաշխման միջոցով 6,400.0 հազ. դրամ փոփոխություններով (Ծրագիր 1-ում 13,207.6 հազ. դրամ նվազեցմամբ և Ծրագիր 2-ում 6,807.6 հազ. դրամ ավելացմամբ): Նախարարության Կոմիտեի ամփոփ և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. տարեկան և ինն ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանշները տրված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Նախարարության Կոմիտեի և ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թվականի ինն ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսա-վորման անվանումը, *(ծածկագիրը)*	2021թ. տարեկան պլան	Փոփոխու-թյուններ տարեկան պլանում		**2021թ. տարեկան ճշտված պլան**	2021թ. ինն ամիսներ							*Կատարման տոկոսը*	
		ՀՀ կառավարության կողմից *(+, -)*	Վերադասի կողմից *(+, -)*		**Պլան**	Փոփոխություն-ներ ինն ամիսների պլանում ՀՀ կառավարության կողմից *(+, -)*	Փոփոխություն-ներ ինն ամիսների պլանում Վերադասի կողմից *(+, -)*	**Ճշտված պլան**	Փաստացի ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարեկան ճշտված պլանի նկատմամբ	Հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
Կոմիտե ***(105015)***	**13,640,062.1**	**+ 2,229,644.0**	0.0	**15,869,706.1**	9,544,371.0	+ 1,552,916.0	0.0	11,097,287.0	8,053,276.7	8,025,116.6	8,136,917.8	***50.6***	***72.3***

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Ծրագիր 1	**7,367,069.2**	+ 739,623.7	-13,207.6	8,093,485.3	5,166,517.8	**+ 508,167.2**	- 9,965.3	5,664,719.7	4,445,220.2	4,435,524.2	4,466,801.6	***54.8***	***78.3***
Ծրագիր 2	**1,085,902.7**	-34,316.2	+ 6,807.6	1,058,394.1	**750,562.6**	**-14,520.0**	+ 4,765.3	**740,875.9**	**724,179.3**	**724,179.3**	**763,286.8**	***68.4***	***97.7***
Ծրագիր 3	**842,000.0**	--	--	**842,000.0**	589,400.0	--	--	589,400.0	458,900.0	458,900.0	474,404.6	***54.7***	***77.9***
Ընդամենը՝ ԾՐԱԳՐԵՐ	9,294,971.9	+ 705,307.5	**-6,400.0**	9,993,879.4	6,506,480.4	**+ 493,715.2**	- 5,200.0	6,994,995.6	5,628,299.5	5,618,603.5	5,704,493.0	***60.6***	***80.3***

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

6.1 Կոմիտեի Ծրագիր 1-ում և Ծրագիր 3-ում 2021թ. ինն ամիսների կտրվածքով հաշվետու տարվա տարեսկզբի նկատմամբ երրորդ եռամսյակում չիրականացված ծախսերի շարունակականության հետ կապված դեբիտորական պարտքերի և, համապատասխանաբար, կրեդիտորական պարտքերի (հիմնականում եռամսյակի վերջին ամսվա չվճարված աշխատավարձեր, հավելավճարներ) տարբերությունները (աճերը) պարունակում են հնարավոր ռիսկեր:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. Արձագանքը բացակայում է:

6.2 Կոմիտեի Ծրագիր 1-ի 2021թ. ինն ամիսների կտրվածքով 9,686.4 հազ. դրամ մնացորդի առկայությունը հիմնավորված չէ:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. Արձագանքը բացակայում է:

6.3 Կոմիտեի 2021թ. ինն ամիսներին Ծրագիր 1-ում բազային ֆինանսավորման շրջանակներում գիտական և գիտատեխնիկական թվով 33 հաստատություններում թվով 127 գիտական ծրագրերի գծով փաստացի ֆինանսավորվել է 812,401.5 հազ. դրամ՝ 60,066.5 հազ. դրամ ճշտված պլանի պայմաններում (տարբերությունը՝ 752,335.1 հազ. դրամ): Կոմիտեի կողմից Ծրագիր 1-ում ԳԱԱ–ին 2021թ. ինն ամիսներին ֆինանսավորվել է 3,255.6 հազ. դրամ՝ 3,968.6 հազ. դրամ ճշտված պլանի պայմաններում (տարբերությունը՝ 705.2 հազ. դրամ): Կոմիտեի 2021թ. ինն ամիսներին գիտական և գիտատեխնիկական թվով 35 հաստատություններում թվով 76 միջազգային գիտական ծրագրերի գծով փաստացի ֆինանսավորվել է 66,588.8 հազ. դրամ՝ 284,808.8 հազ. դրամ ճշտված պլանի պայմաններում (տարբերությունը՝ 218,220.0 հազ. դրամ): Կոմիտեի 2021թ. ինն ամիսներին Ծրագիր 1-ում գիտության ոլորտում տեղեկատվական ցանցերի պահպանման և զարգացման ուղղությամբ ԳԱԱ «Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ» ՊՈԱԿ-ին փաստացի ֆինանսավորվել է 19,960.0 հազ. դրամ՝ 20,599.1 հազ. դրամ ճշտված պլանի պայմաններում (տարբերությունը՝ 639.1 հազ. դրամ):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. Արձագանքը բացակայում է:

6.4 Կոմիտեի Ծրագիր 1-ի ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշների հաշվեքննությամբ պարզվել է, որ 2021թ. ինն ամիսների արդյունքում ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններում սահմանված առկա թվով 15 ցուցանիշներից թվով 6-ում արձանագրվել են նախատեսվածից պակաս, թվով 3-ում՝ զրոյական ցուցանիշներ, իսկ թվով 2-ում՝ ձևատեսքում պահանջվող տարեկան նախատեսված ցուցանիշներից հաշվետու ժամանակաշրջանի տվյալները բացակայում են *(«Միջազգային գիտական ծրագրերում կանանց թիվ» - տարեկան ճշտված ցուցանիշը՝ 24 և «Անկախ փորձագետների /այդ թվում արտասահմանյան/ թվաքանակ», տարեկան ճշտված ցուցանիշը՝ 1714):*

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«... տվյալ փաստացի ծախսերը գոյացել են ոչ թե պակաս իրականացված կամ չիրականացված արդյունքային ցուցանիշներից, այլ իրականացված ցուցանիշների գծով առաջացած փաստացի ծախսն են՝ պայմանավորված այդ ցուցանիշների շարունակականությամբ»:

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են բացատրություններ:

6.5 Կոմիտեի Ծրագիր 1-ի 2021թ. ինն ամիսների արդյունքում ոչ ֆինանսական, արդյունքին միտված ցուցանիշներից «Գիտության ոլորտում համագործակցող գիտական կառույցներ» բաղադրիչով նախատեսված թվով 12 համագործակցող կառույցներից իրականացվել են թվով 1-ը՝ (8,4%):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. Արձագանքը բացակայում է:

6.6 Կոմիտեի Ծրագիր 1-ում 2021թ. ինն ամիսների արդյունքում ոչ ֆինանսական, արդյունքին միտված թվով 3 ցուցանիշների գծով արձանագրվել են զրոյական մակարդակներ՝ դրամարկղային ծախսերի հանդեպ փաստացի ծախսերի 31,277.4 հազ. դրամի գերազանցումների և 1,219.499.5 հազ. դրամի թերֆինանսավորման պայմաններում:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«... թերֆինանսավորման պատճառը պայմանավորված է կազմակերպությունների կողմից ներկայացված ֆինանսավորման հայտերի նախատեսվածից քիչ ծավալով, ինչ վերաբերվում է փաստացի ծախսի գերազանցմանը դրամարկղային ծախսին, ապա պետք է նշել, որ փաստացի ծախսի գերազանցումը տեղի է ունեցել ոչ թե նշված հոդվածի ամբողջ ծավալով, այլ այդ հոդվածով իրականացվող որոշ կոնկրետ պայմանագրերի գծով, կապված հաշվարկված բայց չվճաարված աշխատավարձերի առկայությամբ: Որոշ ակադեմիական կազմակերպությունների գնումների գործընթացում իրականացվել են պահանջվող կանխավճարներ, սակայն գործընթացը դեռ ավարտված չլինելու պատճառով, երբ դեռ չեն ձևակերպվել գնման վերջնական փաստաթղթերը, համապատասխան ձևակերպումներ չեն տրվել որպես փաստացի ծախս, այդ պատճառով առաջացել է դրամարկղային ծախսի գերազանցում փաստացի ծախսի նկատմամբ, ինչը կշտկվի վերոնշյալ գնման գործընթացներն ավարտելուց և համապատասխան ձևակերպումներն անելուց հետո:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

6.7 Կոմիտեի Ծրագիր 2-ի 2021թ. ինն ամիսների շրջանակներում թերֆինանսավորման 16,696.0 հազ. դրամը և փաստացի ծախսի 39,107.5 հազ. դրամով դրամարկղային ծախսին գերազանցման հանգամանքը պարունակում են ռիսկեր:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«… փաստացի ծախսի գերազանցումը դրամարկղային ծախսին կապված չէ թերֆինանսավորման հետ, այն պայմանավորված է նշված ժամանակահատվածում իրականացված ֆինանսավորումներից առաջացած տարբերություններով, ինչն էլ բացատրվում է ծրագրերի տարեկան կտրվածքով շարունակականությամբ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտը առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

6.8 Համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության համապատասխան շտեմարանում առկա տեղեկատվության Կոմիտեի Ծրագիր 2-ի 2021թ. 2021թ. տարեկան կտրվածքով ոչ ֆինանսական, արդյունքին միտված չափորոշիչների «Հետազոտությունների քանակ» (թվով 333) և «Հետազոտություններում ներգրավված կանանց թվաքանակ» բաղադրիչներով նախատեսված ցուցանիշների գծով ինն ամիսների տվյալները բացակայում են:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը.

«… իրականացվող ծրագրերում որևէ անհրաժեշտություն չկա արհեստականորեն սահմանելու հետազոտողների սեռատարիքային թվաքանակ:»

Հաշվեքննողների մեկնաբանությունը.

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ չի ներկայացրել, տրվել են պարզաբանումներ և բացատրություններ:

6.9 Կոմիտեի Ծրագիր 3-ի 2021թ ինն ամիսներում թվով 3 կազմակերպությունների *(«Կուրորտաբանության և ֆիզիկական բժշկության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Գյումրու մասնաճյուղ և «Բարվա» ինովացիոն կենտրոն» ՍՊԸ)* հավելավճարների քանակագումարային ցուցանիշները բացակայում են, սակայն ամփոփագրերում ներառվել են:

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. Արձագանքը բացակայում է:

2021թ. ինն ամիսների հաշվեքննության ընթացքում արձանագրված թվով 9 այլ փաստերից Կոմիտեն *(Կոմիտեի նախագահի 2022թ. հունվարի 18-ի թիվ 08-01/01 գրությունը կցվում է)* ըստ էության առարկություններ չի ներկայացրել: Թվով 4-ի վերաբերյալ տրվել են պարզաբանումներ և բացատրություններ, իսկ թվով 5-ի վերաբերյալ՝ արձագանքը բացակայում է:

7. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՁԵՎԱՉԱՓ

Համ/կ	Առաջարկություններ	Ընդունվել է/ չի ընդունվել	Հաշվի է առնվել/ չի հաշվի առնվել	**Հիմնավորումներ** *(Կոմիտեի նախագահի 03.12.2021թ թիվ 9/9-3/28271-21 գրություն):*
Անհամապատասխանությունների և այլ գրավոր տեղեկատվության վերացման առաջարկությունների վերաբերյալ				

1	Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմ, որի կիրառմամբ կվերահսկվեն գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացված եռամսյակային ոչ ֆինանսական արդյունքին միտված չափորոշիչների զրոյական մակարդակներն ու էական թերակատարումները: Սահմանել այնպիսի վերահսկողական ընթացակարգեր, որոնց կիրառմամբ կբացառվեն Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում ներկայացված ամփոփ ֆինանսական և արդյունքին միտված ոչ ֆինանսական ցուցանիշների բովանդակային և եռամսյա պարբերականությամբ հրապարակված տվյալների արժանահավատության և իրավասության նկատմամբ անհամապատասխանությունները՝ անկախ դրանց տարեկան կտրվածքով շարունակական բնույթից:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	«Կոմիտեի նախագահի հրամանի 1-ին կետով հանձնարարվել է Կոմիտեի գիտության քաղաքականության վարչությանը, հաշվապահական բաժնի հետ համատեղ *«Ուսումնասիրել և Կոմիտեի նախագահին զեկուցել վերահսկողական այնպիսի գործիքակազմերի ներդրման իրավական հնարավորությունները, որոնց արդյունքում հնարավոր կլինի վերահսկել գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացված եռամսյականին ոչ ֆինանսական արդյունքին միտված չափորոշիչների զրոյական ու էական թերակատարումները»* **Վերջնաժամկետ՝ մինչև 2021թ ավարտ**:
2	Ուսումնասիրել, վերլուծել և մոնիթորինգի ենթարկել գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից եռամսյա պարբերությամբ Կոմիտե ներկայացվող ֆինանսավորման հայտերի ուշացումները, դրանց համամասնական գործընթացները և արդյունքին միտված ոչ ֆինանսական ցուցանիշների բովանդակային, իրատեսական և տվյալ եռամսյակին վերաբերելու հանգամանքները:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	*«Կոմիտեի նախագահի հրամանի 2-րդ կետով հանձնարարվել է Կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը «Ուսումնասիրել, վերլուծել և մոնիթորինգի ենթարկել գիտական և գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ֆինանսավորման հայտերի ներկայացման եռամսյակային պարբերական և համամասնական գործընթացները՝ հաշվի առնելով այդ կազմակերպությունների կողմից ֆինանսավորման հայտերի եռամսյա կտրվածքով ուշացումները, պայմանավորված վերջիններիս տարեկան գործունեության առանձնահատկություններով:»* **Վերջնաժամկետ՝ մինչև 2021թ ավարտ** *:*

3	Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես՝ ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերին համապատասխանության և ճշգրտության առումներով: Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկել Կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների անալիտիկ և սինթետիկ մակարդակների, պահանջվող ժամանակահատվածների կտրվածքով տեղեկույթի տրամադրման ճշգրտության ապահովման ուղղությամբ:	*«Ընդունված է»*	*«Ընթացքում է»*	«Կոմիտեի նախագահի հրամանի 3-րդ կետով հանձնարարվել է Կոմիտեի գիտության քաղաքականության վարչությանը, գիտական գործունեության կազմակերպման վարչության և ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հվառման բաժինների հետ համատեղ, *«Հսկողություն սահմանել ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տեղեկատվության վրա, մասնավորապես ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերին համապատասխանության և ճշգրտության առումներով: Ներքին վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միջոցառումներ ձեռնարկել Կոմիտեի կողմից ՀՀ ֆինանսների նախարարության շտեմարաններ փոխանցվող տեղեկատվության ամփոփագրերի և ՀՀ հաշվեքննիչ պալատին տրամադրվող տվյալների անալիտիկ և սինթետիկ մակարդակների, պահանջվող ժամանակահատվածների կտրվածքով տեղեկույթի տրամադրման ճշգրտության ապահովման ուղղությամբ:»* **Վերջնաժամկետ՝ մինչև 2021թ ավարտ** :

8. Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Առաջարկվում է Կոմիտեին.

8.1 Սահմանել և ներդնել գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից ներկայացվող տարեկան (այդ թվում՝ եռամսյակային) ոչ ֆինանսական, արդյունքին միտված այնպիսի չափորոշիչներ, որոնց կիրառմամբ կվերահսկվեն վերջիններիս կողմից ներկայացվող ֆինանսավորման հայտերի

հաջորդականության և պարբերականության հերթականությունը՝ անկախ գիտական գործունեության տարեկան կտրվածքով շարունակական բնույթի առանձնահատկությունից:

8.2 Մշակել այնպիսի վերահսկողական ընթացակարգեր, որոնց կիրառմամբ կբացառվեն Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ում ֆինանսավորման պայմաններում ներկայացված ոչ ֆինանսական արդյունքին միտված ցուցանիշների զրոյական մակարդակները, էական թերակատարումները և արհեստականորեն սահմանված ցուցանիշներ:

8.3 Մշակել ներքին հսկողա-վերահսկողական այնպիսի մեխանիզմներ, որոնցով յուրաքանչյուր առանձին վերցրած գիտական և գիտատեխնիկական կազմակերպության համար, կոնկրետ հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով, թերֆինանավորման պայմաններում, կիիմնավորվի տվյալ ժամանակահատվածում դրամարկղային ծախսի՝ փաստացի ծախսին գերազանցման հանգամանքը: